ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի դեկտեմբերի 24-ի, ժամը 12:00-ի առցանց նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման՝ «Կառավարչական որոշումների ընդունման և իրագործման կառուցակարգերի ու հաղորդակցության տեխնոլոգիաների ազդեցությունը ՀՀ հանրային կառավարման արդյունավետության վրա» ծրագրի** (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Միքայելի Սուվարյան**) **2020 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվության մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը,

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. նախատեսված առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան հետազոտվել և ընդհանրացվել են կառավարչական որոշումների տեսության զարգացման ընթացքն ու հիմնական արդյունքները XX դարում և XXI դարի սկզբում, գնահատվել արդի ինտենսիվ թվայնացման պայմաններում որոշումների ընդունման ու դրանց իրագործման ապահովման մեթոդաբանության կատարելագործման հնարավորությունները տեղեկատվական տեխնոլոգիաների և մաթեմատիկական լուծումների գործադրմամբ: Բնութագրվել են կառավարչական որոշումների ընդունման սուբյեկտները մակրո և միկրոմակարդակներում, առաջնորդման ոճերի և որոշումների ընդունման ու դրանց կատարման ապահովման փոխառնչությունները: Հիմնավորվել են հանրային կառավարման և գործարարության ոլորտներում ընդունվող կառավարչական որոշումների ազդեցության գնահատման հիմնարար սկզբունքները: Հետազոտության արդյունքում հիմնավորվել է, որ արդի պայմաններում և ապագայում կառավարչական որոշումների ընդունման տեղեկատվական տեխնիկական հնարավորությունների ընդլայնումը հարկ է զուգակցել ղեկավարների մտավոր կարողությունների ավելացման և առաջնորդելու ժողովրդավարական մասնակցային ոճի արմատավորման հետ թե՛ կառավարման, թե՛ գործարարության ոլորտներում: Ընդունվող և իրագործվող կառավարչական որոշումները պայմանավորում են երկրի և առանձին կազմակերպությունների զարգացման ուղղությունները, տնտեսական ու սոցիալական մակարդակը, ռազմավարական-մրցակցային դիրքը և անվտանգային համակարգը: Հանրային կառավարման և գործարարության բնագավառներում կառավարչական որոշումների ազդեցությունը գնահատելու տարբերակ է կառավարման քանակական և

որակական արդյունավետության ցուցանիշների համակարգը: Քանակական արդյունավետությունն արտահայտում է համախառն ներքին արդյունքի (կազմակերպություններում՝ վաճառքի ծավալի) և կատարված ծախսերի հարաբերակցությունը: Եթե արդյունավետությունը բարձր է, ապա կառավարչական որոշումները դրսևորել են դրական ազդեցություն: Որակական արդյունավետության ցուցանիշը արտացոլում է սահմանված նպատակների կատարման արդյունքները: Եթե փաստացի արդյունքների և նպատակների համադրումը դրական է, ապա քանակական արդյունավետության բարձրացումը ապահովել է կառավարչական որոշումներով ամրագրված նպատակների իրագործումը: Նշեցին նաև, որ հատկապես հանրային կառավարման համակարգում ընդունվող կառավարչական որոշումները կարևոր նշանակություն ունեն, քանզի հենց այդ որոշումներն են մեծապես նպաստում հասարակության կենսամակարդակի բարձրացմանը, սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, ոլորտային բարեփոխումներին, գործազրկության մակարդակի նվազմանը և այլն: Ուստի հանրային կառավարման համակարգում ընդունվող որոշումների արդյունավետության բարձրացումը և դրա ընթացակարգի պատշաճ կազմակերպումը մնում են պետական կառավարման մարմինների ղեկավարների ուշադրության կենտրոնում: Ուսումնասիրելով կառավարչական որոշումների ընդունման և իրագործման ընթացակարգերը պետական կառավարման համակարգի մարմիններում, նշեցին, որ որոշումների ընդունման գործընթացը բարդ, աշխատատար և ժամանակատար է, որն անցնում է բազմաթիվ փուլերով: Դրանք ընդունվում են Սահմանադրության, օրենքների, իրավական ակտերի և պետական մարմինների կանոնադրությունների հիման վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Հավանություն տալ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման՝ «Կառավարչական որոշումների ընդունման և իրագործման կառուցակարգերի ու հաղորդակցության տեխնոլոգիաների ազդեցությունը ՀՀ հանրային կառավարման արդյունավետության վրա» ծրագրի** (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Միքայելի Սուվարյան**) **2020 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությանը և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե** (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն, կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2020 թ. դեկտեմբերի 24
Երևան

ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի դեկտեմբերի 24-ի, ժամը 12:00-ի առցանց նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման՝ «ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների արդյունավետ փոխգործակցության հնարավորությունները»** (ծրագրի գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյան**) **2020 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվության մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Կ.Հ.Գրիգորյանը:

Զեկուցողը և արտահայտվողները նշեցին. հետազոտությունը կատարվել է ծրագրի հաստատված առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան: Աշխատանքի առաջին փուլում խնդիր է դրվել ներքին տնտեսական շոկերի էության բացահայտմամբ, ներքին տնտեսական շոկեր առաջացնող գործոնների ուսումնասիրմամբ, ներքին տնտեսական շոկերի դասակարգմամբ, իրական և ֆինանսական հատվածների վրա ներքին տնտեսական շոկերի ազդեցության ուղիների ու մեխանիզմների վերաբերյալ մոտեցումների մեկնաբանմամբ, արդի փուլի մակրոտնտեսական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծությամբ առանձնացնել ՀՀ տնտեսության վրա զգալի ազդեցություն ունեցող և հաճախակի կրկնվող ներքին տնտեսական շոկերը, հստակեցնել դրանց՝ ՀՀ տնտեսություն փոխանցման ուղիները, բացահայտել դինամիկ հավասարակշռության ապահովման ուղիներն ու հնարավորությունները ՀՀ-ում: Երկրորդ փուլում ներքին շոկերի մակրոտնտեսական կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքների գնահատման նկատառումով ուսումնասիրվել է ՀՀ տնտեսության հատվածային կառուցվածքը, բացահայտվել են կառուցվածքային տեղաշարժերը և առկա դեֆորմացիաները, մեկնաբանվել է տնտեսության իրական և ֆինանսական հատվածներով արտաքին և ներքին տնտեսական շոկերի տարածումը, բացահայտվել է ներքին շոկերի ազդեցության դեպքում ՀՀ մակրոտնտեսական կայունության խախտման և դրա վերականգնման շարժընթացը, գնահատվել են ներքին տնտեսական շոկերի ազդեցությունները ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Երրորդ փուլում ՀՀ-ում իրականացված հարկաբյուջետային քաղաքականության, պետական պարտքի կուտակման գործընթացի, գործող և նախկին հարկաբյուջետային կանոնների քննական մեկնաբանմամբ, ՀՀ-ում վարվող դրամավարկային քաղաքականության մեջ ներքին պարտքի շուկայի դերի մատնանշմամբ, ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի կառուցվածքի,

սցենարային վերլուծությամբ գնահատվել են պարտքի մակարդակի և հարկաբյուջետային կայունության վրա պարտքի պորտֆելի, ինչպես նաև տարբեր մակրոֆիսկալ շոկերի պայմաններում պարտքի կայունության վրա պարտքի կառավարման և քաղաքականությունների հնարավոր ազդեցությունները: Չորրորդ փուլում ուսումնասիրելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների փոխառնչությունները, բացահայտվել են մակրոտնտեսական քաղաքականության իրականացման առանձնահատկությունները ներքին տնտեսական շոկերի պայմաններում, տնտեսության իրական և ֆինանսական հատվածների արդյունավետ փոխգործակցության և ներքին շոկերի նկատմամբ ՀՀ տնտեսության խոցելիության նվազման հնարավորությունները: Ներքին շոկերի ի հայտ գալու դեպքում արձագանքման արդյունավետ մեխանիզմներ մշակելու համար կարևորվել է ներքին շոկերի մակրոտնտեսական կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքների գնահատումը: Հետազոտական խմբի կողմից դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների՝ տնտեսության վրա ունեցած, ինչպես նաև փոխադարձ ազդեցությունների գնահատման համար մշակվել են վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելներ: Մասնավորապես՝ նախ SVAR մոդելների միջոցով գնահատվել են ռեպո տոկոսադրույքի, արտարժութային ինտերվենցիաների, պետական ծախսերի և հարկերի դրույքաչափերի շոկերի ազդեցությունները տնտեսության վրա և դրանց փոխանցումային մեխանիզմը: Շոկերի ազդեցությունների գնահատման DSGE մոդելը հնարավորություն է տվել հաշվի առնել շոկերի մուլտիպլիկատիվ ազդեցությունները և տնտեսության տարբեր ոլորտների միջև փոխկապվածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Հավանություն տալ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման՝ «ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների արդյունավետ փոխգործակցության հնարավորությունները»** (ծրագրի գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կարեն Համլետի Գրիգորյան**) **2020 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությանը և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե** (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն, կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2019 թ. դեկտեմբերի 18
Երևան